վտակը, որն սկսւում է Գաղակաթիլ լեռնամասից, սկզբում ուղղւում է արեւելք, ապա թեքւում է հիւսիս-արեւելք եւ նորից արեւելք, ոռոգում է Խամխալ, կամ Խալխալ աւանը եւ դաշտը ու խառնւում է Ծորոխին։

Փեսունջուր առ-ը ընդունում է ձախից Էյերլի լ-րից իջած Ճադմեա, Դանգլետի եւ Նիցգովանի, խաչումսար լ-ից Բեդաձոր եւ Ջիրչեմ առներ. աջից՝ Խեձոր եւ Խեւիցճար, որոնք բոլորն էլ ոռոգում են համանուն գեղերը, սրանց եայլաները, աւերակ բերդերը, ախոռներն ու մացրաները։ «Փեսունջուր» չորս-հինգ հազար տարուան անունը, պատմական այս կոչումը, որ պահպանել է Ծորոխի այս վտակը, որ ոռոգել է Ծորոխի ափերին հիմնած մոզպետներից մէկի աւանը-Խալխալը, որի անունը հասել է ակկատսումմէրների մոզպետներին եւ պատէզեներին եւ նրանց դրացիներին, աւանդաբար մտել է Աստուածաշնչի դրախտի նկարագրութեան մէջ եւ համարւել է դրախտի չորս գետերից — Փիսովն անունով։ Խալխալը երեւի գոյութիւն ունեցել է Զագրոսի լ-ների, Անշանի Ոստանի-Խալխալի ժամանակ Միջագետքի եւ Հերրոների երկրի Կարգարի գուգընթաց, Գիլանի, Ուտիքի, Դարալագեազի Խալխալների հետ։ Քսենոփոնի, Ստրաբոնի եւ արեւմտեան պատմագիրների նկարագրածն անշուշտ այս գետն է։ Կարելի է եզրակացնել, որ Ծորոխի նշանաւոր